amenoor
adventures and expeditions with spinnaker group

ՎԻԵՏՆԱՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-11, 2024

1.220.000
մեկ անձ / երկտեղանի սենյակ

Բաղրամյան 1, Երևան, ՀՀ
amenoor@spinnaker.am
amenoor.am
+374 77 155 167

SPINNAKER GROUP

ԱՄԵՆԱՏՊԱՎՈՐԻՉ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԼՈՆԳ ԾՈՎԱԽՈՐՇՈՎ

Հալոնգը համարվում է ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ: «Հալոնգ» թարգմանաբար նշանակում է «վայր, որտեղ վիշապն իջել է ծովը»: Ըստ լեգենդի՝ Հալոնգ կղզին ստեղծվել է հսկա վիշապի կողմից: Տեղացիները մինչև այժմ էլ ասում են, որ ծովածոցում վիշապ է ապրում: Ծովախորշը ներառում է ավելի քան 3000 կղզի՝ մեկը մյուսից դրախտային լողափերով:

ՈՍԿԵ ԿԱՄՈՒՐՋ. ԴԱՆԱՆԳ

Այս կամուրջն արդեն հասցրել է գրավել միլիոնավոր զբոսաշրջիկների ուշադրությունը: 1414 մ. բարձրությամբ ու 150 մ. երկարությամբ այս յուրօրինակ կամուրջը բացվել է 2018թ-ի հունիսի վերջին: Կամուրջը պահում են երկու հսկայական ձեռքեր: Ոսկե կամրջից հիասքանչ տեսարան է բացվում Դանանգի Բա Նա Հիլզ լեռները:

ՀՈ ՀՈԱՆ ԿՅԵՄ ԼԻՃ. ՀԱՆՈՅ

Հո Հոան Կյեմ լճին երբեմն անվանում են նաև «Վերադարձված թրի լիճ» կամ «Կանաչ ջրերի լիճ»: Լիճը գտնվում է մայրաքաղաք Հանոյի կենտրոնում ու համարվում է Վիետնամի կարևորագույն տեսարժան վայրերից:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹՌԻՉՔԻ ՏՎՅԱԼՆԵՐ

01.11.24 Երևան–Դոհա 03:00–05:00 >> Դոհա–Հանոյ 20:30-07:10+1
11.11.24 Հոշիմին–Դոհա 08:55–13:05 >> Դոհա–Երևան 20:05–00:15+1

ԾՐԱԳՐԻ ՏԵՍԱԿ

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ • ՆԱՎԱՐԿՈՒԹՅՈՒՆ • ԾՈՎԱՓՆՅԱ

ԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Grand Mercure Hanoi • Emeralda Resort Tam Coc •
Essence Grand Cruise • Altara Suites Danang • New World Saigon

ՍՆՈՒՆԴ

Նախաճաշեր • 7 ճաշ • 4 ընթրիք

ԲԱՑԱՀԱՅՏԵՔ ԱՐՏԱՍՈՎՈՐ ՎԻԵՏՆԱՄԸ amenoor-Ի ՀԵՏ

Այստեղ յուրաքանչյուր զբոսաշրջիկ իրեն կզգա ապահով ու շրջապատված սիրով: Վիետնամցիները շատ լավ հասկանում են, որ իրենց բարեկեցությունը մեծապես կախված է զբոսաշրջիկներից, այդ իսկ պատճառով, անում են ամեն ինչ, որ զբոսաշրջիկն իրեն լավ զգա:

Վիետնամն անդադար ձգում է նոր զգացողությունների սիրահարներին: Այստեղ ամեն քայլափոխի կարելի է կանգ առնել ու զարմանալ: Զբոսաշրջիկները գալիս են Վիետնամ վայելելու չքնաղ բնությունը, մաքուր օդն ու սպիտակ լողափերը, ու սրանք, ուղղակի, խոսքեր չեն:

Լինելով ագրարային երկիր՝ փոքրաթիվ գործարաններով, Վիետնամին հաջողվել է պահպանել բնությունն ու չաղտոտել շրջակա միջավայրը: Այստեղ գրեթե մեքենաներ չկան, իսկ բնակիչները երթևեկում են կամ հեծանիվներով, կամ՝ մոպեդներով: Վիետնամը զբոսաշրջիկներին գրավում է նաև իր բյուջետային գներով, ուստի գնումներ անելիս, դուք հաճելիորեն կզարմանաք:

Այնպես որ, եթե պատրաստ եք բացահայտել Վիետնամը, հավաքեք ճամպրուկները:



ՌԱՅԱ ԲԱԿԱՆՅԱՆ

Խմբի ղեկավար, արկածասեր

ՄԵԿՆՈՒՄ • 01.11.24

Երևան–Դոհա 03:00–05:00 >>
Դոհա–Հանոյ 20:30-07:10+1



ՕՐ 1-2 | ԹՌԻՉՔ ԵՐԵՎԱՆԻՑ, ԺԱՄԱՆՈՒՄ ՀԱՆՈՅ, ՇՐՋԱՅՑ ՀԱՆՈՅ ՔԱՂԱՔՈՒՄ

01.11.23 թ. Երևանից կսկսվի մեր ճամփորդական արկածը: Իսկ 02.10.23 թ. առավոտյան ժամանելով Վիետնամի մայրաքաղաք Հանոյ՝ մեզ կդիմավորի տեղացի ուղեկցորդը ու կուղեկցի հյուրանոց: Մինչև ճաշը կունենանք որոշ ժամանակ թռիչքից հանգստանալու և ուժերը վերականգնելու համար, իսկ կեսօրից կսկսենք քաղաքային շրջայցը Հանոյում:

ՇՐՋԱՅՑ ՀԱՆՈՅ ՔԱՂԱՔՈՒՄ

Քաղաքային շրջայցը կսկսեք Գրականության տաճար այցելությամբ: 1076 թ. կառուցված Գրականության տաճարը Վիետնամի առաջին համալսարանն էր և ստեղծվել էր Վիետնամի թագավորական ընտանիքի անդամներին, մանդարիններին և էլիտայի անդամներին կրթելու նպատակով: Համալսարանը գործել է 700 տարի: Տաճարի այգիները և լավ պահպանված ճարտարապետությունը հիանալի հնարավորություն են ծանոթանալու Վիետնամի անցյալին: Այնուհետ կայցելենք գեղատեսիլ Հոան Կիեմ լիճ և Նգոկ Սոն տաճար: Այնուհետև կունենանք մեկժամյա խելահեղ բագգիներով շրջայց Հանոյի կոլորիտային փողոցներով, կծանոթանանք տեղացիների առօրյա կյանքին և թոհուբոհին, կվայելենք հիասքանչ Հին թաղամասը:
Մեր հաջորդ կանգառն է հայտնի Դոնգ Սյուան շուկան, որտեղից կարող եք հուշանվերներ գնել ձեր սիրելիների համար:

Այսօր մեզ բախտ կվիճակվի նաև ականատես լինել հայտնի ջրային տիկնիկային ներկայացմանը: Այս վիետնամական ավանդական արվեստի արմատները հասնում են 10-րդ դար՝ Հյուսիսային Վիետնամի Կարմիր գետի դելտա շրջան: Տիկնիկների խաղին տիրապետելը այստեղ ավանդույթ է, որ փոխանցվում է սերնդեսերունդ որպես ընտանեկան գաղտնիք: Գլխավոր բեմը ջրագծից ներքև է, իսկ տիկնիկավարները մինչև գոտկատեղը կանգնած են ջրի մեջ: Տպավորիչ է հնչում, չէ՞:



NINH BINH

TRANG AN

ՕՐ 3 | ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ՆԻՆՀ ԲԻՆՀ

Այսօր կունենանք 2,5 ժամանոց մեքենայով ուղևորություն դեպի Նին Բին՝ Վիետնամի հյուսիսային շրջաններով մինչև Հոա Լուի՝ Վիետնամի առաջին մայրաքաղաքը:

Հասնելով Նին Բին հեծանիվներով կուսումնասիրենք այս ինքնատիպ գյուղն ու հովիտը: Ճանապարհին կանգ կառնենք՝ լուսանկարելու ապշեցուցիչ տեսարանները: Այնուհետև այցելեք Թայ Վի տաճար, որը նվիրված է Թրան թագավորին: Ճաշից հետո կայցելենք Տրանգ Ան Լանդշաֆտային համալիր, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ է: Հարմարավետ նավով կզբոսնենք խաղաղ գետի երկայնքով, որն անցնում է մի շարք քարանձավների միջով: Տրանգ Անը կրաքարային կարստային գագաթների տպավորիչ լանդշաֆտ է՝ պարուրված հովիտներով, որոնցից մի քանիսը շրջապատված կտրուկ, գրեթե ուղղահայաց ժայռերով: Կանցնենք բրնձի կանաչ դաշտերից դուրս եկող հսկայական կրաքարային կարստներով, որտեղից էլ վայրի մյուս անունը՝ «Ha Long on Land»: Այս դրախտում միակ աղմուկը թռչունների երգի ձայներն են և բյուրեղյա մաքուր գետի ջրերի զարկը ափի երկայնքին: Իզուր չէ այն համարվելում էկոտուրիզմի իդեալական գոտի:

Այնուհետև տեղափոխվենք Նին Բինի մեր հյուրանոց և օրվա մնացած մասը անցկացրեք ինչպես կամենանք:

ՕՐ 4 | ՀԱԼՈՆԳ ԲԵՅ ԳԻՇԵՐԱԿԱՅՈՎ ԿՐՈՒՅԶ

Նախաճաշից հետո հարմարավետ մեքենայով ճանապարհ կընկնենք դեպի Հալոնգ Բեյ, որտեղ մեզ կսպասի 5* կրուիզ նավը: Նավամատույց հասնելուն պես կտեղավորվենք մեր սենյակներում և կսկսենք անմոռանալի նավարկությունը Հալոնգ Բեյի ծովախորշերում: Նավի վրա ճաշելուց հետո բավականին ազատ ժամանակ կունենանք տարբեր զվարճանքների կամ պարզապես նավի վրա հանգստանալու համար: Օրվա վերջում մեր նավը խարիսխ կգցի կարստային գոյացություններից մեկում:
Երեկոյան կվայելենք նավի վրա մատուցվող համեղ ընթրիքը, իսկ առավոտյան կարթնանանք անծայրածիր ծովում:

HALONG BAY



TAI CHI CLASS

ՕՐ 5 | ՀԱԼՈՆԳ ԲԵՅ ԳԻՇԵՐԱԿԱՑՈՎ ԿՐՈՒԻԶ – ՀԱՆՈՅ – ԴԱՆԱՆԳ

Եվս մեկ գեղեցիկ օր, որ կսկսենք Հալոնգ Բեյ ծովածոցի մեջտեղում՝ տախտակամածի վրա tai chi մարտարվեստի դասից և նավի վրա մատուցվող նախաճաշից, մինչ մեր հսկա նավը ժայռերի միջով դանդաղորեն ճանապարհ կընկնի դեպի նավահանգիստ: Մինչ նախաճաշը հնարավորություն կունենանք նաև կայակինգի ընթացքում բացահայտել Հալոնգ Բեյի թաքնված հմայքը:

Բրանչից հետո ուշ կեսօրին Հանոյ ժամանելուն պես հարմարավետ մեքենայով կտեղափոխվենք Նոյ Բայ օդանավակայան՝ դեպի Դանանգ թռիչքի համար:

Ժամանելով Դանանգ օդանավակայան, մեզ կդիմավորի մեր տեղացի գիդը և կուղեկցի հյուրանոց: Գիշերակացը կանցկացնենք Դանանգի ամենաշքեղ ծովափնյա հյուրանոցներից մեկում:

ՕՐ 6 | ԴԱՆԱՆԳ – ՀՈՅ ԱՆ – ԿԱՄ ԹԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈԿՈՍԻ ԳՅՈՒՂ

Հյուրանոցում նախաճաշելուց հետո կուղևորվենք դեպի Կամ Թան ջրային կոկոսի գյուղ, տեղում կծանոթանանք գյուղի պատմությանը: Այնուհետ մեզ սպասվում է բամբուկե նավերով նավարկություն կոկոսի գետի երկայնքով, որի ընթացքում ձկնորսները մեզ կսովորեցնեն բռնել ծովախեցգետիններ: Նավարկությունն ավարտելուց հետո կվերադառնանք Հոյ Ան քաղաք ճաշելու և զբոսնելու:

Հոյ Անը բացահայտելու լավագույն տարբերակը զբոսնելն է: Զբոսանքի ընթացքում կայցելենք պատմական առևտրային և համայնքային տներ, պաշտամունքի վայրեր և հայտնի ճապոնական ծածկված կամուրջ, կծանոթանանք տեղացիների առօրյային: Անծայրածիր բրնձի դաշտեր, բանջարանոցներ, շուկաներ, տաճարներ, պատմական տներ և ապշեցուցիչ տեսարաններ, որ մեզ չեն դադարի հիացնել: Իհարկե չենք մոռանա այս ամենը ֆիքսել տեսախցիկներով, որ անմոռանալի հիշողություններով կիսվենք ընկերների հետ: Գիշերակացը կանցնկացնենք Դանանգի մեր 5* հյուրանոցում:

ՕՐ 7 | ԲԱՆԱ ՀԻԼՍ (ՈՍԿԵ ԿԱՄՈՒՐՋ)

Հյուրանոցում նախաճաշից հետո կուղևորվենք Դանանգ՝ Վիետնամի չորրորդ ամենամեծ քաղաքը, որ համարվում է կենտրոնական նահանգների դարպաս և ծովային նավահանգիստ՝ գեղեցիկ լողափերով և հանգստավայրերով:
Այսօր կայցելենք Բանա Հիլզ՝ թեմատիկ զբոսայգի, որը գտնվում է սարի գագաթին՝ 1500 մ բարձրության վրա: Այն ստեղծվել է 1920-ականներին ֆրանսիացիների կողմից, ամառային շոգից փախչելու նպատակով:

Մեր անչափ հետաքրքիր էքսկուրսիան կսկսենք Բա Նա լեռան ստորոտից մեկնարկող ճոպանուղուց, որը 2009 թ. գրանցել է Գինեսի 2 համաշխարհային ռեկորդ՝ ճանաչվելով աշխարհի ամենաերկար (5042 մ) և ամենաբարձր (1292 մ) նոն-ստոպ ճոպանուղին: Խցիկից կվայելենք անծայրածիր անտառների, փարթամ ջունգլիների և ջրվեժների տպավորիչ տեսարանները: Վստահ ենք, Բա Նա լեռների ամեն տեսարան մի նոր անկանխատեսելի բացահայտման զգացում կառաջացնի ձեզ մոտ:

Ճոպանուղու առաջին կայարանի մոտ կայցելեք Le Jardin, հին գինեգործարաններ, ֆրանսիական վիլլաների ավերակներ և Ling Ung Pagoda, որտեղ կտեսնենք 27 մետր բարձրությամբ Բուդդայի արձանը: Այնուհետև կշարունակենք դեպի ճոպանուղու երկրորդ կայարան՝ բարձրանալու լեռան գագաթը և տեսնելու հին վիլլաների ավերակները: Երբ նվաճենք Չուա լեռան գագաթը, 1487 մ բարձրությունից մեր առջև կբացվի ամբողջ Դանանգ քաղաքի համայնապատկերը: Այստեղից Dreaming Stream արահետի հետքերով կշարժվենք դեպի Ծիածանի ջրվեժ, Կախովի կամուրջ, Ոսկե հովիտ և ավերված Օպերայի շենք, ճանապարհին կտեսնենք վայրի կապիկների և իհարկե չենք մոռանա լուսանկարվել:



ՕՐ 7 | ԲԱՆԱ ՀԻԼՍ (ՈՍԿԵ ԿԱՄՈՒՐՋ)

Ոսկե կամրջով կզբոսնենք լեռան մառախլապատ բլուրների միջով և կվայելենք Դա Նանգ քաղաքի հիասքանչ տեսարանը: Ճաշից հետո ճոպանուղով կիջնենք կայարան և կվերադառնանք Դանանգ:

Այնուհետ կշարունակենք Դանանգի ուսումնասիրությունը՝ այցելելով Լին Ունգ պագոդա: Այստեղից բացվում է հիասքանչ տեսարան դեպի ծովը և Չամ կղզիները: Այստեղ նաև կտեսնենք ողորմության աստվածուհու՝ Գուանյինի 67 մետրանոց արձանը: Ըստ տեղացիների՝ Գուանինը պաշտպանում է ձկնորսներին վտանգից, ուստի այստեղ հաճախ կարելի է հանդիպել զոհաբերություններ մատուցողների կամ աղոթողների:

Օրը կավարտենք հայտնի Հան շուկա այցելությամբ, որտեղ կարող եք հուշանվերներ գնել ձեր սիրելիների համար, և կվերադառնանք Դանանգի մեր հյուրանոց:

ՕՐ 8 | ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿ ԴԱՆԱՆԳՈՒՄ ԾՈՎԱՓՆՅԱ ՀԱՆԳՍՏԻ ՀԱՄԱՐ

Դանանգում կունենանք 1 ազատ օր ուժերը վերականգնելու, տարատեսակ ջրային զվարճանքների, ձկնորսության և ուղղակի թարմ ծովամթերք վայելելու համար:

ՕՐ 9 | ԴԱՆԱՆԳ – ՀՈՇԻՄԻՆ

Նախաճաշից հետո կունենանք որոշ ազատ ժամանակ մինչև Դանանգ օդանավակայան տեղափոխումը, քանի որ ունենալու ենք ներքին թռիչքի դեպի Հոշիմին: Տան Սոն Նհաթ օդանավակայան ժամանելուն պես մեզ կդիմավորի մեր տեղացի ուղեկցորդը և կուղեկցի հյուրանոց:

Կեսօրից հետո ավտոբուսով և ոտքով կշրջենք գաղութային Հոշիմին քաղաքի հիմնական տեսարժան վայրերով. Անկախության պալատ, Պատերազմի մնացորդների թանգարան, Հին Սայգոնի փոստային բաժանմունք, Աստվածամոր տաճար, մեծ երկաթուղային կայարան, Dong Khoi փողոց, Continental հյուրանոց, Օպերա և Հո Շի Մին քաղաքի Ժողովրդական կոմիտե, որը Վիետնամի ամենաշատ լուսանկարված շենքերից մեկն է և աչքի է ընկնում իր այգիներով, զարդանախշ ֆասադով և էլեգանտ ինտերիերը լուսավորող բյուրեղյա ջահերով: Ընթրիքից հետո կվերադառնանք հյուրանոց:

ՕՐ 10 | ՀՈՇԻՄԻՆ – ՄԻԹՈ (ՄԵԿՈՆԳ ԴԵԼՏԱ)

Առավոտյան մեր տեղացի զբոսավարի հետ կուղևորվենք Բեն Տրե՝ Մեկոնգ դելտայի սիրտը, որը հայտնի է իր հսկայական բրնձի դաշտերով և ապշեցուցիչ տեսարաններով:

Եռաշարժիչ հեծանիվներով զբոսանքի ժամանակ կվայելենք բրնձի դաշտերի և պտղատու փարթամ այգիների տեսարանները գյուղական նեղ ճանապարհների երկայնքով:

Օրը կշարունակենք գեղեցիկ նավարկությամբ և կհիանանք Դելտայի տեսարաններով՝ վայելելով կոկոսի հյութը: Նախ կանգ կառնենք՝ այցելելու կոկոսի վերամշակման գործարան, այնուհետև նավարկելով կհասնենք աղյուսների պատրաստման արհեստանոց, որտեղ տեղացիները դեռ օգտագործում են ձեռքով աղյուսներ պատրաստելու դարավոր ավանդական մեթոդները: Այստեղից կսկսենք հեծանիվով զբոսանքը և կուղևորվենք տիկին Հուոնգի տուն: Նրա ընտանիքն ապրում է ձկնորսությամբ, ծովախեցգետինով և հողագործությամբ: Վայելեք արևադարձային մրգեր և մեղրով թեյ նրա այգում, նախքան սամպանի և թիավարման փորձառություն՝ փոքրիկ ջրանցքների լաբիրինթոսը բացահայտելու համար:

Ճաշից հետո կայցելենք պարոն Բա Թայի տուն՝ սովորելու բրնձի գինի պատրաստելու հետաքրքրաշարժ գործընթացը: Վերջապես, հիշարժան այցելություն պարոն Սաու Թուոնգին, Վիետկոնգում նախկին զինվորի, ով փրկվել է Պնոմպենում Կարմիր քմերների դեմ երկու տարի կռվելուց հետո: Այժմ նա և իր կինը ապրում են բրնձի թղթի արտադրությամբ, որը Mai Long Village-ի ամենահայտնի դելիկատեսն է: Կզրուցենք նրա հետ, կվայելենք նրա կնոջ պատրաստած խրթխրթան բրնձի թուղթը և կտեսենք, թե ինչպես է այն պատրաստվում:

Նավը կսպասի մեզ մոտակայքում գտնվող նավամատույցում, որպեսզի հետ տանի Բեն Տրե քաղաք, որտեղ մեքենան պատրաստ կլինի մեզ վերադարձնել Սայգոն:

ՕՐ 11 | ՀՈՇԻՄԻՆ – ՄԵԿՆՈՒՄ ԵՐԵՎԱՆ

Այսքանով կավարտվի մեր ճանապարհորդությունը և կմեկնենք դեպի հարազատ Երևան՝ լի անմոռանալի տպավորություններով:

ԺԱՄԱՆՈՒՄ • 11.11.24

Հոշիմին–Դոհա 08:55–13:05 >>
Դոհա–Երևան 20:05–00:15+1

ՓԱԹԵԹԻ ԱՐԺԵՔԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է

- Երկկողմանի ավիատոմս Երևանից
- Երկկողմանի փոխադրում օդանավակայան - հյուրանոց
- Տեղափոխում ամբողջ երթուղու ընթացքում
- Shinkansen գնացքի տոմսեր
- 9 գիշեր 5* երկտեղանի սենյակներում նախաճաշով
- 7 ճաշ, 4 ընթրիք տեղի ռեստորաններում
- Հայ և տեղացի անգլալեզու ուղեկցորդների ծառայություններ
- Գիշերային նավարկություն Հալոնգ Բեյում
- Ծրագրում նշված փորձառություններ
- Մուտքի արտոնագիր
- Ապահովագրություն
- Մուտքի տոմսեր

1.220.000 Դ
մեկ անձ / երկտեղ.

1.520.000 Դ
մեկ անձ / մեկտեղ.

SPINNAKER GROUP

amenoor
adventures and expeditions with spinnaker group

ԲԱՑ ՄԻ ԹՈՂԵՔ ԱՅՍ ԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԱՉՔԵՐՈՎ ՏԵՍՆԵԼՈՒ ԲԱՑԱՌԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ՎԻԵՏՆԱՄԸ ՍՊԱՍՈՒՄ Է ՁԵԶ:

Բաղրամյան 1, Երևան, ՀՀ
amenoor@spinnaker.am
+374 77 155 167
amenoor.am